

ԱՐՈՎՅԱՆԸ ԵՎ ԻՌԻՍԱՍՏԱՆԸ

ՊԻՈՒ ՀԱԿՈՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ու ստեղծագործության հետ սերտորեն կապված են մեր մշակույթի և հանրային մտքի պատմության մի շարք հանգուցային հարցեր ու երևույթներ^{*}։ Հայոց նոր գրականության սկզբնավորումը, հանուրին հասկանալի աշխարհաբարի համար մղվող պայքարի ամենաբորբոքուն ու զրամատիկ շրջանը, նոր պատմագրության, իմաստասիրության, ազգագրության ու բնագիտության առաջին քայլերը, հայ ժողովրդի համախմբումը մայր հայրենիքում և որպես ազգ ձևավորվելու ընթացքը, օտար բռնապետական լծից արևելահայության փրկությունը և ռուսական հզոր տերության հովանու տակ նրա տնտեսական և մշակութային կյանքի առաջընթացը և այլն։ Այսչափ խորհրդանշական իրադարձությունները դրժվար թե տեղի ունենային շատ կարճ ժամանակահատվածում, եթե Ռուսաստանն ու ռուս ժողովուրդն իրենց մարդասիրական օգնությունը ժամանակին չհասցնեին։

Հայ և ռուս բարեկամության գաղափարի ամենաեռանդուն ժողովրդականացնողը և ամենանվիրված պաշտպանը Խաչատուր Աբովյանն էր։ Նրա մեծագույն նպատակն այդ ժողովուրդների հոգևոր ու քաղաքական սերտ մերձեցումն էր, առանց որի աներևակայելի էր հայության գոյությունն ու բարգավաճումը։

Այս բոլորով հանդերձ, հայ նոր գրականության և հասարակական մտքի պատմության հետազոտողների համար Աբովյանի՝ ռուսական առնչությունների հարցը յուրօրինակ գալթակղության բար է դարձել։ Մասնավորապես վերջին տասնամյակների հետազոտողներից ոմանք Աբովյանի ստեղծագործությունները լրջորեն վերընթերցելու, նրա հայացքները անկանխակալ և համակողմանի քննության ենթարկելու փոխարեն սկսել են մտացածին «մեկնաբանություններով» աղավաղել հանրահայտ հշմարտությունները, կասկածել հայ ժողովրդի պատմական բախտի մեջ Ռուսաստանի խաղացած զերի մասին մեծ գրողի ու մտածողի ասած խոսքերի անկեղծությունը, որոնել դրանց մեջ ինչ-որ թաքնված ենթաիմաստ կամ դիտավորություն, որպիսիք իրականում չկան։

Շփոթելով պատմական իրադրություններն ու ժամանակները՝ որոշ ուսումնասիրողներ Աբովյանին վերագրում են տեսակետներ ու մտքեր, որ նա ընդհանրապես չի՝ ունեցել կամ արտահայտել ի վերջո, Աբովյանը հռչակվում է «հակապետական գործիչ» ու «բունտար», և մտացածին հանցանքների համար «ղատապարտվում» մի այնպիսի պատժի, որն ընդհան-

^{*} Հոդվածը, որպես զեկուցում, կարդացվել է ՍՍՀՄ ԳԱ և ՀՍՍՀ ԳԱ միացյալ հոբյանական գիտական նստաշրջանում՝ նվիրված Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու 150-ամյակին, 1978 թ. սեպտեմբերի 25-ին, Երևանում։

րասպետ անձանոթ է հնօրյա Ռուսիայի բանտերի և իրավունքի պատմությանը¹։


Գրականագիտի խիղճը մեկ իրավունք չի տալիս անտարբեր դիտողի դերում մնալ և հանդուրժել պատմական ճշմարտությունների այսօրինակ քմահաճ մեկնաբանմանը, մեծ հայրենասերի մաքուր կերպարի այսօրինակ աղավաղմանը, որքան էլ վերջինս գայթակղիչ լինի։ Գաղտնիք չէ, որ անցյալի դեմքերն ու դեպքերը վե՛հ են ու հերոսական իրենց իրական գործերով ու ընթացքով, եթե մինչև իսկ՝ ժամանակակից հայեցակետից վերլուծելով, նրանց մեջ ինչ-ինչ ստվերներ էլ երևան գան կամ նկատվեն։

Արքայանիւն և Ռուսաստանը թեման մի քանի զլխավոր հայեցակետեր ունի, որոնցից ընդհանուր ձևով քննության կառնենք երեքը. Արքայանիւն ռուսական կողմնորոշման խնդիրն ընդհանրապես, Արքայանիւն առնչությունները ռուսական մշակույթի հետ և Արքայանիւն որպէս ռուսաց լեզվի, գրականության ու մշակույթի տարածող ԱՄՆ-ի 30—40-ական թվականների հայ իրականության մեջ։

Մկսենք բուն նյութից։

ա) Արքայանիւն ռուսական կողմնորոշումը.— Հայ ժողովրդի համար ռուսական կողմնորոշումը համազոր էր ազգության ֆիզիկական պոլիթյան և ներքին շփոթումը ազատության պահպանման։ Առանց արտաքին օգնության նա անկարող էր վերականգնել իր խաթարված քաղաքական կյանքը։ Երես թիւիւ Ռուսաստանից կամ խուսափել նրա հետ մերձենալուց, նրա զինակցությունից, նշանակում էր այսուհետև ևս դատապարտվել էլ ավելի վատթար ստրկության և լիակատար ոչնչացման։ Հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական զարգացումը XVII—XVIII դդ. սահմանագծին հասել էր մի վիճակի, երբ առանց հզոր հովանավորության այլևս անկարելի էր նրա առաջխաղացումը։ Այս բանը հրաշալիորեն հասկանում էին վերջին դարերի հայ ազատագրական շարժման առաջնորդները՝ Բսրայել Օրին ու Հովսեփ էմինը, Եսայի Հասան-Ջալալյանցն ու Սիմեոն Երևանցին, Հովսեփ Արղությանն ու Ներսես Աղտարակեցին, իսկ հետագայում էլ՝ Հարություն Ալամդարյանն ու Խաչատուր Արքայանը, մինչ շարունակում էին պարսկական ու թուրքական բռնապետական լծից Հայաստանի լիակատար ազատագրման ու վերամիավորման ուղիների որոնումը, մինչ հյուսում էին վերածնված ու լուսավորված Հայաստանի մասին իրենց շքեղ երազները, իրենց հանապազօրյա գործունեությամբ նպաստում ռուս անվան հեղինակության բարձրացմանը։ Արևելքի ժողովուրդների շրջանում, արագացնում պարսից դժոխքից հայության փրկության ժամը, որն և ի վերջո հնչեց 1827 թ. հոկտեմբերի 1-ին։

¹ Արքայանիւն անհայտացման վարկածի լուծման վերջին, ձախող փորձին անդրադարձել ենք հատուկ հոդվածով (տե՛ս «Երեւոն», 1977, № 5, «Արքայանիւն անհայտացման հին վարկածի նոր սմեկնաբանումը») ու ցույց տվել, որ դա դիտության հետ ընդհանուր ոչինչ չունի։ Հիմա էլ այդ կարծիքին ենք։ Ակադեմիայի հրատարակությամբ դրանից հետո, 1979 թ., լույս է բնծայվել վարկածի արծարծողներից մեկի՝ Վ. Ղազարյանի դիրքը, որի մեջ կրկնվում են նույն տեսակետներն ու խեղաթյուրված փաստերը՝ առավել չափազանցված։ Այժմ էլ Արքայանիւն ներկայացվում է որպէս քաղաքական արտոնական և 1853 թ. ղեկ կենդանի, Սիրիում կամ այլուր ուսուցչությամբ պարապող անձնավորություն (բայց թե ո՞ր, չի ասվում)։ Սա միամիտ լեզուն է։ Այսօրինակ փորձերը միայն ապակողմնորոշում են անտեղյակ ընթերցողներին։ ԼԵԱՐԵՆ 6--2



Կյանքի դասերն էին Լեռովյանին հասցրել այդ աներեր՝ համոզմանը, որին հետագայում նա երբեք չզավեց: Լեռովյանը հրաշալիորեն ըմբռնում էր կատարվածի ողջ վեհությունը և շրջադարձային նշանակությունը. Թուսաստանը հայ ժողովրդին փրկել էր ֆիզիկական ոչնչացումից, ազատել ստրկական հնազանդությունից, առել իր հովանավորության տակ, հնարավորություններ ստեղծել ազգորեն համախմբվելու և ինքնաճանաչման գալու: Լեռովյանը անհերքելի ցանկություն էին առաջացնում որոշակի վերաբերմունք արտահայտելու, և Լեռովյանի ամենատարբեր ստեղծագործությունների մեջ, հիրավի, գտնում ենք մեծ շրջադարձի անցուղարձերի արժեքավորման խորիմաստ փորձեր: Ռեալիզմը հայրենիքի ազատագրության միտքը, — գրել է նա, — պետք է ողջ կյանքիս ընթացքում խնդրեմ որ շնորհակալությամբ լցնի իմ սիրտը և ջերմ մաղթանքներ ուղղի Թուսաստանի անասանության և հարատևության համար դեպի այն էակը, որի հայրական սիրտը մեզ էլ արժանացրել է մի բարեգործ կառավարության՝ բոլոր այն նեղություններից ու տանջանքներից հետո, որոնց ներքո մենք խորապես տառապում էինք դարեր շարունակ²: Լեռովյանը ու ավելի խորանալով իրադարձությունների մեջ՝ Լեռովյանը կանխատեսում է նաև Թուսաստանի մեծ ու քաղաքակրթիչ դերը ողջ Լեռնի կյանքում: Ռեալիզմը համոզումն է, — հայտարարում էր նա, — որ միմիայն Թուսաստանն է ի վիճակի Լեռովյանի ժողովուրդներին հասցնելու նրանց սրտանց տենչած երջանկությանը³:

Լեռովյանը գաղափարներն ու ըմբռնումները դրսևորվել են Լեռովյանի այն բոլոր ստեղծագործություններում, որոնք առնչվում կամ վերաբերվում են Լեռնի շրջանի հայության՝ ռուսական հզոր տերության կազմի մեջ մտնելու դարաշրջանի հայության կյանքը, կենցաղը, մտածողությունը, ազատագրական որոնումները, հերոսական սխրանքները և պատմական տրամադրությունները:

Լեռովյանը ստեղծագործությունները հատուկ նշանակություն էր տալիս կյանքի են կոչվել պատահականորեն, այլ բաղադրվել են ու բաղադրված են խորապես մտածված ու վերապրած էջեր՝ թղթին հանձնված մեծ գրողի ու մտածողի ստեղծագործական կյանքի ավելի քան քսան տարիների ընթացքում: Դրանց երախտագրությունը «Դուրսից» են այս ցոյցը մերս Հայաստանի...» բանաստեղծությունն է՝ գրված 1827 թ. հոկտեմբեր-նոյեմբերին, որին այնուհետև հաջորդում են արձակ ու չափածո մի շարք ուրիշ երկեր՝ «Խնդամիտ զգացմունք երախտագրի Հայկազին յազատութիւն Հայրենեաց իւրոց» (1828—1830), «Երեւակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեռն Լեռաւատ» (1829) «Մուտ Հայկայ ի Հայաստան» (1830), «Մտածմունք ի տեսիլ Հայրենեաց» (1840²), «Լեռնի առ Մուսայն» (1840²), «Վերջ Հայաստանի» (1841), «Հազարփնջեն» (1841²), «Մուտ ի Հայրենիս» (1844): Սրանց գաղափարապես մերձեցնում են նրա ուղեգրություններն ու ակնարկները՝ «Լեռնի բարեսնունդ և սիրելի աշակերտս իմ» (1838), «Թուս-պարսկական պատերազմի նախօրին» (1846²), «Ուղեգրութիւն դեպի Լեռնի ավերակները» (1847), հրապարակային դանազան ելույթներ, նամակներ և կրթական-ուսումնական նախադրեր՝ մատուցված ռուսական կայսրին, Լեռնի կուսակցության զպրոցների վերա-

² Լ. Լեռովյան, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ Լ. Լեռովյան), հ. VIII, Երևան, 1958, էջ 65 և 82 (թարգմանությունը վերանայված է):

³ Նույն տեղում, էջ 83:

տեսչություններ, Բնախույզների մոսկովյան կայսերական ընկերության վարչություններ, ընդհուպ մինչև 1848 թ. սկզբները, որոնց բոլորի կետ նպատակն է Ռուսաստանի հովանու տակ հայ և անդրկովկասյան ժողովուրդների տրևատեսական ու կրթական վիճակի վերափոխումը, Ռուսաստանի նկատմամբ հայ ժողովրդի երախտագիտական զգացումների մշտաբուրբոր պահպանությունը Գրական-հրապարակախոսական վերահիշյալ երկերի մեջ Արքայանք փառաբանում է ռուսներին՝ նրանց անշահախնդիր եղբայրական օգնության համար:

Մի դեպքում դրանք տեսական բունության մեջ շնչահեղձ եղող հայության դավակների բաղձանքն ու աղերսանքն են՝ ռուսաց հովանավորության արժանացնելու համար. «Տե՛ր աստված, դու մեր ռուս թագավորի սիրտը ռահմյցես, որ գա, մեզ ազատի...»⁴. մյուս դեպքում՝ մատնանշում են այն բաղձալի գալիքը, որ անկարելի է առանց ռուսական տերության հովանավորության, հետևաբար՝ ամեն ջանք պետք է գործադրել, որ ռուսական զեղերն ընդմիշտ մնան Այրարատյան աշխարհում, կամ, ինչպես Արքայանքի քնարական հերոսն է ասում՝ «իրանց բարի ոտը մեր աշխարհիցը չկտրեն, որ բալբի մեր հայրենիքը նրանց արծվի թևերի տակին զորանա, մեծանա, դարդերը մոռանա, ու էլ ետ իր առաջին փառքին հասնի»⁵:

Այդ նույնն է պատգամում Արքայանք իր քնտրական սրտակեղևը խոստովանության մեջ՝ արված Մուսային. խորասուզվելով մեր ազգի ողբերգության իրական պատճառների մեջ, ի վերջո, նա գտնում է հայության կործանված տունը վերաշինելու վստահելի նեցուկ ու պատվար, որից շնչվելից համազոր էր հանցափորձության: Ուստի, Արքայանք սթափ մտքով, բայց և զգացված՝ փառաբանում է այդ հովանավորությունը.

Մեր ջերմ արեգակ զիր շողս սփռեսցէ,
Մեր սուրբ դաշտօրայք զկնդրուկս խնկեսցէ
Առ մե՛ր լուսատու Արքայ մեծազօր,
Առ մե՛ր հայր՝ գթած, բարի և հզօր,
Կնդրուկ սրբութեան սիրոյ սուրբ սրտից,
Կնդրուկ անուշից, զո՛հ ողջակիղից,
Արդար սեղանոյ նոյան սուրբ դաշտաց...
Ջմեր մայր, զտեր, մեր պաշտպան-փրկիչ
Ջնոր մեր այս նոյ տօնել խնդալից.
Տօնել, տօնախմբել և նաւակատկել,
Երգել, փառատրել զմուտ նորա և զել.
Ջմեր սիրտ, հոգի նմա զո՛հ մատնել,
Եւ զմեղ ընդ նորայն արծուի թևովք
Ի շար թշնամեաց պահել պահպանել...⁶

Խորհրդանշական են, վերջապես, Արքայանքի յուրօրինակ հոգևոր կտակը հանդիսացող այն խոսքերը, որոնք գտնում ենք իր անհետացումից փոքր-ինչ առաջ հրացայտ սլացքով զրված վերջին կարևոր ստեղծագործության՝ «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» ճամփորդական խորհրդա-

⁴ Խ. Արքայանք, հ. III, Երևան, 1948, էջ 33:

⁵ Նույն տեղում, էջ 114:

⁶ Խ. Արքայանք, հ. I, Երևան, 1948, էջ 211—212:

ծուխյունների մեջ, Հայրենակիցների ուշադրությունն հրավիրելով այն մեծ կորուստների վրա, որ ունեցել է Ռուսաստանը Արևելյան Հայաստանի փրկության համար մղված մարտերում՝ թափելով իր ազգի հազարավոր զավակների արդար արյունը, Աբովյանն արյամբ սրբազորված այս բարեկամուծյունը հավերժ պահելու պատգամ է ուղղում իր հայրենակիցներին. «Եվ թող վեր հենեն Բագրատունիները, թող հառնեն Տիգրաններն ու Հայկյան հսկաները՝ արժանավայել կերպով օրհնելու տոթ, կիզիչ Հարավը բարեկարգող Հյուսիսի որդիների առաքինի գործերը: Եվ թող Հայաստանի ամայացած, բայց կրկին կենդանացած տաճարներում վերաաբվի միայն մի աղերս, միայն մի՝ աղոթք. Աստված, պահիր թագավորին և հզոր ու բարերար սրբազան Ռուսիան»:

Վերջին ժամանակներս երբեմն հայտարարվում է, որ իբր Աբովյանը միմյանցից տարբերել է երկու Ռուսաստան և ռուսական երկու մշակույթ կամ կուլտուրա, փառաբանել է դեմոկրատականը, հոգեպես մերձեցել հեղափոխական Ռուսաստանի հետ, բայց և հիմքից մերժել ու նշավակել պաշտոնական, միապետական Ռուսաստանը: Սա չփաստարկված, միամիտ և հակապատմական տեսակետ է: Աբովյանն իր համոզումներով ու էությունով մինչև ուղն ու ծուծը լուսավորիչ է, նրա անկեղծ համոզմամբ՝ «Ազգը, որ կա, մի մարմին ա, ամեն մարդ՝ նրա անդամը: Ամենն էլ ձեռքերիցը էկա՜ր պետք է անեն, ինչքան կարողություն ունին, միմյանց քոմակ անեն, որ առողջ, սաղ, սալամաթ մնան»⁷: Այս ըմբռնումը յուրօրինակ իլյուստրացիա է լենինյան հայտնի խոսքերի, որ ստեղծագործական մարքսիզմի հանձարը ասել է ռուս և արևմտաեվրոպական լուսավորիչների կապակցությամբ. «... նրանք միանգամայն անկեղծորեն հավատում էին ընդհանուր բարօրությանը և անկեղծորեն ցանկանում էին այն, անկեղծորեն չէին տեսնում (մասամբ դեռ չէին կարող տեսնել) հակասություններ այն կարգի մեջ, որ ճորտատիրականից էր աճում», և ապա՝ «լուսավորիչներն իբրև իրենց հատուկ ուշադրության առարկա չէին առանձնացնում բնակչության ոչ մի դասակարգ, խոսում էին ո՛չ միայն ժողովրդի մասին ընդհանրապես, այլև նույնիսկ ազգի մասին ընդհանրապես»¹⁰:

բ) Աբովյանի առնչությունները ռուսական մշակույթի հետ. — Մի անըմբռնելի ձգտում ունեն Աբովյանի գրական առնչությունների ուսումնասիրողները: Առանձին բանասերներ, չգիտես ինչու, իրենց մի տեսակ ընկճված են զգում, որ Աբովյանը չի հիշվում Պուշկինի, Լերմոնտովի, Բեյկոսկու անձնական բարեկամների շրջանում: Հայ «տարաբախտ» գրողին այդ «անցանկալի» վիճակից դուրս բերելու համար ոմանք մտացածին ու կեղծ զուգահեռներ և հանդիպումներ են հորինում վերոհիշյալների հետ, շունենալով ձեռքի տակ և ո՛չ մի նշանախնդ, նրանք մոռանում են, որ Աբովյանը, իբրև բանաստեղծ, ձևավորվել է անցյալ դարի քսանական թվականների կեսերին և գրական ուսուցիչներ ու առաջնորդներ է ունեցել նախ և առաջ հայ հին պատմիչ-գրողներ Խորենացուն ու Եղիշեն, միջնադարյան

⁷ Խ. Աբովյան, հ. VII, Երևան, 1956, էջ 149:

⁸ Խ. Աբովյան, հ. III, էջ 237:

⁹ Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 650:

¹⁰ Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 676:

Հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացուն, իսկ ապա՝ Հետևել ու յուրացրել միիթարյան բանաստեղծական զուրոցի և ուշ միքնադարի հայ տաղերգուներին (Պետրոս Ղափանցի, Պաղտատար Գալի, Սիմեոն Երևանցի, Պետրոս Աղամալյան) ստեղծագործական փորձը, Ավելի ուշ, ոուս գրականությունը ծանոթանալուց հետո, Արովյանը նախընտրել է Մ. Վ. Լոմոնոսովին, Մ. Ն. Կարամյուխին, Ի. Ա. Կոխլովին ու Վ. Ա. Ժուկով-սկուն, որոնք, հիրավի, այդ (ևսև հաջորդ) տասնամյակներին գրական բարձր հեղինակություն էին վայելում Ռուսաստանում, Վերջիններիս հետ հոգեհարազատությունը պայմանավորված էր նաև Արովյանի անձնական խանութվածքով ու գրական դավանանքով՝ սկսելով կլասիցիզմից և անցնելով սենտիմենտալիզմի բովոյ, ի վերջո, նա հանգեց ուսմանտիզմին, Հետագայում, ծանոթանալով Արևմտյան Եվրոպայի ժողովուրդների գրականություններին, Արովյանը հարստացրեց ու վերակառուցեց իր բանաստեղծական աշխարհը, նրա սիրելի գրողներից դարձան նաև Հոմերոսը, Տաստե, Ռուսոն, Եիլերը, Գյոթեն, Բյոռնսը, Բայց բնավ չազդուացան հայ ուսուցիչներ Բղիշեի և Նարեկացու և ոուս մեծ դասականներ Լոմոնոսովի, Կարամզինի, Կոխլովի և Ժուկովսկու պայծառ կերպարները։ Ահա այս գրողներին էլ ունենալով իր մտքի ու հոգու ամենապինիվ զգացումներն առկոյած գեղագետների շարքում, Արովյանն ավարտեց իր ստեղծագործական կյանքը։ Հնարավոր է, որ ինչ-որ ժամանակ, ինչ-որ առիթով Արովյանը թերթած լինի Պուշկինի, Լերմոնտովի կամ Բելինսկու ստեղծագործությունները, ինչպես և հակառակը, հնարավոր է, որ նա հեռվորց կամ, թեկուզ, մոտիկից մեկին կամ մյուսին տեսած լինի, գուցե և մեկ-երկու բառ, մի քանի ընդհանուր խոսքեր փոխանակած, Բայց այդ մասին նա ընդհանրապես ոչինչ չի՝ ասել, իր գրական կամ բացասական վերաբերմունքը որևէ ձևով նրբեք չի՝ արտահայտել, նրանց գործերը չի՝ թարգմանել, իր ստեղծագործությունների մեջ նրանց մտքերին ուղղակի կամ անուղղակի ձևով չի՝ արձագանքել։ Պուշկինի, Լերմոնտովի և Բելինսկու անձին ու գործին վերաբերող վավերական և հուշագրական նյութերում էլ Արովյանին առնչվող ոչինչ չկա։

Հարկ կա՝ այս պայմաններում պատրանքերով և իրականության տեսք տված անիրական ու անզո առնչակցություններով ոչ միայն հրապուրվել, այլև անփորձ ընթերցողներին ստիպել, որ հաճախ, ասենք, մի կողմից Արովյանի, և մյուս կողմից՝ առանձին-առանձին վերցված, Պուշկինի, Լերմոնտովի և Բելինսկու անձնական ու զազափարական զաղտնի կապերի գոյությունը։ Պատմությունն այդ իրավունքը մեզ չի բնձնում և խորհուրդ է տալիս բավարարվել այն գրողներով, որոնց Արովյանն իսկապես ճանաչել է։

զ) Արովյանը որպես ռուսաց լեզվի, գրականության և մշակույթի տալանդալ հայ իրականության մեջ.— Դեռ քսանական թվականներին հայոց եկեղեցու լրրօսյալոհ պետերը, տակավին էլ միանշի վանական զուրոցի աշակերտ Արովյանին ուղարկում են Թիֆլիս ուսանելու նաև ռզմադկեայ լեզու ոուսացը¹⁾։ Այստեղ մնալով չորս տարի՝ Արովյանը ոչ միայն բավարար դիտելիքներ է ամբարում ոուսաց լեզվի ու մշակույթի մասին, այլև աստիճանաբար զալիս է այն համոզման, որ եթե ավատական Հայաստանի համար կրթության

1) Արովյան, հ. X, Երևան, 1961, էջ 119.

լույսը հառազում էր անտիկ քաղաքակրթության օրրաններից՝ Ալեքսանդրիայից, Աթենքից, Եղեսիայից, Շոմից, ապա ներկա դարում դրանց փոխարինելու էին գալիս ռուսական գիտության և մշակութի օջախները՝ Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանները, որոնց ձգտում ու դիմում էին հայ ուսումնաստենշ երիտասարդները։

Իր վաղ շրջանի նամակներից մեկում ճարտասանական գյուտերի և այլաբանական դատողությունների միջոցով Աբովյանն այն միտքն էր զարգացնում, թե ժամանակի հայ երիտասարդությունն անհամեմատ ավելի նախանձելի վիճակում է, քան Արևմուտքի ճանապարհները մաշած հները։

Մինչև... երթային յԱթենս և շահէին ինքեանց զվաճառս զերանճառ լուսաւորութեան։ Բայց ելցեն այժմ նոքին իսկ նախնիք մեր, ելցեն և բարերարք նոցա, ելցեն և տեսցեն, թե զո՞ր բարիս նորջանկութեան արդէն գտանին ի Ձեզ (այսինքն՝ ռուսների տիրապետության օրերին—Պ. Հ.) թոռունք և որդիք իւրեանց, բանի՞ զերապատկութեամբ անցին զանցին զնորօք ի վայելչութեանս նրկնակենցաղ բարգաւաճութեան և արտօնութեան, ողորմութեան և բարերարութեան, լուսավորութեան և իմաստութեան»¹²։

1837 թ. սկզբներից մինչև իր խորհրդավոր անհետացումը զբաղվելով մանկավարժական գործունեությամբ՝ սկզբում Քիֆիսի, իսկ հետո Երևանի զավառական դպրոցներում, միաժամանակ նաև իր բաց արած մասնավոր պանսիոնում, Աբովյանը մշտապես ավանդում էր ռուսաց լեզու, վերջինիս հիմնավոր ուսուցումը դիտելով ոչ այն էական նախապայման հայ պատանիների հոգեկան ու ֆիզիկական կատարելագործման և բարեկենցության հասնելու համար, մասնավանդ որ, պատմական հանգամանքների բերումով՝ ռուսաց լեզուն դարձել էր հայ պատանեկության մուսավոր զարգացմանը նպաստող միակ աղբյուրը¹³։ Ժամանակակիցների վկայությամբ՝ մի առիթով իր աշակերտներին նա ասել է. «Ռուսերեն, նրեխա յք, ռուսերեն, զուք ինքներդ պիտի բանաք ձեր ճանապարհը»¹⁴։

Որեւէ օտար լեզվի ուսուցման նպատակը, ըստ Աբովյանի, ո՛չ թե սեփական անձի համար ժամանակավոր օգուտներ քաղելը պիտի լինեն, որն, ի դեպ, չէր բացառվում, այլ ամենից առաջ և զլիսավորապես, օտար զրականության, գիտության ու արվեստի հուշարձանների օգնությամբ իր միտքն ու հոգին կրթելն ու ազնվացնելը, կյանքի ու աշխատանքի կադմակերպման լավագույն ձևերի ընդօրինակումը, նրանց մտքերի ու մտածողության րնթացքին ծանոթանալը, նրանց հետ հոգեպես մերձենալն ու բարեկամանալը։ Հայ ժողովրդի զավակների համար, մասնավորապես, կենսական անհրաժեշտություն էր ռուսաց լեզվի ուսուցումը, որը նրանց առջև, ռուսական լայնածավալ կայսրության մեջ, բաց էր անում գործունեության և առաջադիմության լայն ասպարեզ և իր մշակութային գանձերով մեծապես նպաստում հայ պատանեկության հոգևոր ազնվացմանն ու վերածնությանը, հայ և ռուս ժողովուրդների փոխըմբռնմանը և քաղաքական ու հոգևոր մերձեցմանը. «Այս իմաստով՝ արևելյան և արևմտյան լեզուներից ո՞րը կարող է այնպես

¹² Նույն տեղում, էջ 118, Ա 512։

¹³ Ե. Արևիկյան, Շ. ԼՄ, Երևան, 1959, էջ 9։

¹⁴ «Ժամանակակիցները հայատուր Աբովյանի մասին», կազմեց և ներածականները գրեց Հ. Մուրադյան, Երևան, 1941, էջ 60։

նպաստամատույց լինել մեր ազգի համար, ինչրան ուսներենը»¹⁵,— գրել է Արովյանը:

Արևելահայ իրականության մէջ Արովյանն առաջիններից մեկն էր, որ ընթանալով իր բազմերախտ ուսուցչի՝ Հարություն Այամզարյանի հետքերով, կազմել է ռուսաց լեզուն համեմատական եղանակով դասավանդելու համար մի սքանչելի ձևունարկ՝ սուր տեսական և գործնական քերականութիւն Ռուսաց վասն Հայոց» խորագրով: Այդ գիրքը 1840 թ. քննության է ներառվել և արժանացել Ս. Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի հավանությանը, սակայն միջոցների պակասությունը պատճառ դարձավ, որ մենար անտիպ և լույս աշխարհ դար միայն մեր օրերում:

Պահպանվել և մեզ են հասել Արովյանի՝ դպրոցական բարձր իշխանություններին հղած բազմաթիվ ղեկուցագրեր, ու ղեկույցներ, որոնցով նա գործնական միջոցներ է առաջարկում Անդրկովկասյան դպրոցներում ու տեղական ժողովուրդների շրջանում ռուսաց լեզվի դասավանդման և ուսուցման գործը բարելավելու և ռուսական մշակույթը տարածելու համար:

Հայ և ռուս, ռուս և անդրկովկասյան ժողովուրդների փոխըմբռնման և հոգեկան մերձեցման զաղափարի գրական արտահայտություններից է Արովյանի «Հաղարփեչեն» պոեմը, բոտ էություն մինչև այժմ ճիշտ շմեկնաբանված մի ստեղծագործություն: Հայ ժողովրդի բարոյական զիմաստվերի աղնվազմանը նպաստելու էին կոչված ռուս դրողների ստեղծագործություններին: Արովյանի կատարած բազմաթիվ թարգմանությունները, որոնցից լավագույնները Կոխովի ու հեմմինգերի երկերն են: Շատ տասնամյակներ այդ երկերը դարդարել են հայերեն դասագրքերն ու ընթերցարանները և դարձել հարազատ, սիրված գործեր:

Ընդանրապիս, ի՞նչ է թարգմանել Արովյանը ռուս գրականությունից: Ահա դրա թիշ թե շատ ամբողջական պատկերը.

ա) Մ. Ն. Կարամզինից՝ «Բախսա» հնորյա բալլադը, «Կղզին Բորնհոլմ» նորավեպից «Законы осуждают...» («Անգութ օրէնք դատապարտէ...») սկզբածրով երգը և «Ռուս ճանապարհորդի նամակները» երկի V մասից մի հատված՝ Կիլիկյան Հայաստանի վերջին թագավոր Լևոն Վեցերորդ Լուսինյանի մասին:

բ) Լ. Ա. Կոխովից՝ «Արարեքք», «Ճգնավորն ու Արջը», «Անցվորականքն ու Շունը», «Զաղրի շունը ու Ֆիլը», «Ֆելն ու Փառք», «Առյուծն ու Մոծակը», «Այապաստրակը ֆորս անելիս», «Աղուէս և հաղոզ», «Ճպուռ և Մրջին» առակները (վերջին երկուսը՝ զրաբար):

գ) Ի. Ի. հեմմինգերից՝ «Խանը», «Քոռերը», «Սառը», «Անբաղաքավարի էջը» առակները:

դ) Ի. Ի. Գմիստրինից՝ «Արտուտը իր ձագերովը ու Երկրագործը» առակը: և) Վոյեյկովից (Ալեքսանդր Ֆլոդորովիչ)՝ «Плеч русского» («Ռուսի ողբը») եղերերգության սկիզբը. իսկ այդ երկը զրված էր Ալեքսանդր Առաջինի մահվան թարմ տպավորության տակ (Արովյանը նախ՝ արտագրել է ամբողջ ոտանավորը և ապա՝ ձեռագրի լուսանցքում թարգմանել առաջին երկու տները):

¹⁵ Ե. Արովյան, հ. 1X, էջ 12 (թարգմանությունը արաբերէց):

զ) Առաջժամ չպարզված աղբյուրներից ու հեղինակներից Աբովյանն այնուհետև թարգմանել է՝ 1. «Բաղդատի ճամփորդ էջը», «Կատուն ու Մուկը» և «Ծղն ու Շունը» առակները. 2. Նայ ժողովրդի պատմության մասին մի փոքրիկ հոդված՝ բաղված 1820-ական թթ. ռուսական ինչ-որ լրագրից և մեջ բերված՝ իր «Համառոտ ակնարկ հայերի մասին» գերմաներեն աշխատության մեջ. 3. «Император Александр в Париже и падение Наполеона, или бес-примерные черты величия, правосудия и благости Русского царя, дарую-щего миру мир» (Մոսկվա, 1814) անանուն գրքույկի առաջին էջերը:

է) Բացի սրանցից՝ Աբովյանի «նոր տնտական և գործնական քրական-նութիւն Ռուսաց վասն Հայոց» ձեռնարկի հավելվածներում գտնում ենք ռուս գրողներ Կարամզինի «Կեանքն Աթենացւոց», Դմիտրիևի «Աղանձակ», Դեր-ժավինի «Ճշմարիտ երջանկութիւն», Լոմոնոսովի «Տաղերգութիւն ըստ Յո-րայ» ստեղծագործությունների և մի զպրոցական թատերի դրոյան ռուսերին բնագրերն ու հայերեն վերծանությունները՝ փոխադրված մերթ բառացի, մերթ էլ միայն առանձին բառեր կամ արտահայտություններ (տողեր):

ը) Աբովյանի հայացքած զվարճալի և կարճ պատմվածքների տնտ-րականներում տեղ են գտել ռուս պետական գործիչների կյանքից առնված դրո-վագներ՝ իշխան Գ. Ա. Պոտյոմկինի անիմաստ շռայլության¹⁶ և Պետրու-Մեծի անվեհերության ու հաստատակամության մասին¹⁷, որոնց սկզբնաղ-բյուրները, սակայն, պարզված չեն. հնարավոր է, որ դրանք շարադրելիս՝ Աբովյանը ռուսական ժողովրդական զրույցները նկատի առած լինելու նրկու մանրապատումն էլ բարոյակրթիչ նպատակներ հն հետապնդում:

Թարգմանությունների կապակցությամբ նշենք, որ դրանք ինքնուրույն ստեղծագործություններ չեն և չի կարելի հավասարության նշան դնել թարգ-մանվողի ու թարգմանողի գրական նախասիրությունների և աշխարհըմբռ-նումների միջև: Բայց հատկապես Աբովյանի դարաշրջանում, երբ սովորու-թյուն չկար թարգմանած երկերի սկզբնաղբյուրը նշել, ու հաճախ դրանք այնպես էին հայացվում, որ բնավ էլ գյուրին չէր տվյալ գրողի ինքնուրույն հորինվածքներից զանազանելը, պետք է զգույշ լինել և աչք չփակել հոգե-հարազատության գրսևորումների հանդեպ, որոնք, ցանկանք թե ոչ, առկա են ռուս գրականությունից ն. Աբովյանի կատարած վերահիշյալ թարգմա-նությունների և սեփական հորինվածքների միջև:

Ռուս գրողների բնարական և ուսուցողական, մանկավարժական ու պատ-մական այն երկերը, որոնք թարգմանել է Աբովյանը, ներդաշնակվում էին նրա լուսավորական աշխարհայեցողությանը և ստեղծագործական տվյալ շրջափու-լի ռճական նախասիրություններին: Նույնը պիտի ասենք նաև Աբովյանի՝ ռուսերեն բնագրերով կարդացած գրքերի մասին, որոնցից ցայժմ հայտնի են՝ Մ. Ն. Զագոսկինի «Յուրի Միլոսլավսկի կամ Ռուսները 1612 թվականին» պատմավեպը (Բ տիպ, Մոսկվա, 1830), որ ժամանակին լայն տարածում ուներ, Մ. Ն. Կարամզինի «Ռուսական տերության պատմություն» բազմահա-տոր աշխատությունը, Տ. Բուլգարինի «Իվան Վիժիգին» վեպը (4 հատոր, Մ. Պետերբուրգ, 1829), որը ռուս քաղբենիների սիրած գրքերից էր, «О до-лж-ности человека и гражданина» խորագրով անանուն ընթերցարանը, հա-

¹⁶ Ե. Աբովյան, Դ. 1V, Երևան, 1947, էջ 61:

¹⁷ Նույն տեղում, էջ 89:

վանարար նաև՝ «Жизнь генерал-лейтенанта князя Мадатова» վարքագրությունը (Ս. Պետերբուրգ, 1837), որի հետքերը նկատվում են «Վերջի Հաստատան» վնագում:

Արքայանքի ուսուցիչ թարգմանություններով է կարգացել (և, ինչպես երևում է, ինչ-ինչ հատվածներ էլ վերաշարադրել հայերեն) միջնադարյան նշանավոր աստվածաբան Թովմա Կեմպացու (1380—1471) «Златое слово святого Фомы Кемпского»—«О подражании Иисусу Христу, четыре книги, или Фомы Кемпского Златое сочинение для христиан» (Մոսկվա, 1784) երկը և Հովսեփ Երկայնաբազուկ Արղունյանի «Исповедание христианской веры Армянской церкви» աշխատությունը (Ս. Պետերբուրգ, 1799): էջ-միասնի վանքում ապրած տարիներին ձեռքի տակ է ունեցել Մովսես Խորենացու Հայոց պատմության և Աշխարհացույցի ուսերեն թարգմանությունները՝ կատարված Հովսեփ սարկավազ Հովհաննիսյանի ձեռքով և հրատարակված Պետերբուրգում, 1809 թ. (2 հատոր), ինչպես նաև՝ Ե. Խաչարյանի «Գիրք որ կոչի շաւիղ լեզուսկիտութեան» ձեռնարկը (Ս. Պետերբուրգ, 1788), որն իրականում հայ-ուսերեն բառարան էր:

«Նախաշավղի» նախապատրաստական նյութերի տեսրակներից մեկում¹⁸, ուր մեծ թիվ են կազմում թարգմանական նյութերը, հիշվում է մի ուսերեն ժողովածուի խորագիր՝ «Отрывки из прозаических сочинений лучших писателей для постепенных занятий переводами с русского языка на французский и немецкий» (երկրորդ հրատ., Ս. Պետերբուրգ, 1829): Բուն գրքի ուսումնասիրությունը, սակայն (դրա մի օրինակը պահվում է Լենինգրադի Սայտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանում), ցույց տվեց, որ Արքայանքի այդտեղից ոչինչ չի վերցրել: Ի դեպ, «Հատվածների» հեղինակների մեջ Պուշկինի անունը չկա:

Թիֆլիսում և Երևանում ուսուցչություն անելիս՝ տեղի գավառական դպրոցների համար Արքայանքի դուրս է գրել ուսաց լեզվով բազմաթիվ պարբերական հրատարակություններ (հարկավ՝ պետական միջոցներով). ամենահեղինակավորը «Օտեչեստվեննիե դավիսկի» ամսագիրն է, ապա գալիս են՝ «Ժուռնալ միսիստերստվա նարոդնոգո պրոսվեշչենիյա», «Զավավկազսկի վեստնիկ», «Մայակ», «Կավկազ», «Կավկազսկի կալենդար», «Սենատսկիե վեդոմոստի», «Բիրիտոսկա կամերչեսկիս վեսնիյ», այնուհետև՝ ուսումնական դանազան ձեռնարկներ, դասագրքեր, ընթերցանության գրքեր, բայց մասնավորապես այս վերջինների մեջ, բացառությամբ Կոնյովի առակների ժողովածուի, համարյա ուշագրավ բաներ չկան:

Ի՞նչ նյութեր է Արքայանքի անձամբ բաղել մամուլից. բիշ բան գիտենք և այդ մասին, որովհետև նրա ձեռքով որևէ նշում կամ գրանցում չի պահպանվել, և թե չհիշենք Ի. Շոպենի վիճակագրական տեղեկագրերից մեկը («Հանրային կրթության միսիստերստվա ամսագրի» 1840 թ. XXVII գրքից) և Շամայուս մոտ խփած նավթի շատրվանի մասին մեկ հոդված, որ երկրաբան Է. Աբիխի խնդրանքով թարգմանել է Տփղիսի «Զավավկազսկի վեստնիկ» լրագրից, ուսերենից-գերմաներեն (1845, փետրվարի 15, № 4, հոդվածի հեղինակը Պ. Իոսելիանին է):

¹⁸ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Խ. Արքայանքի թղթեր, № 107:

Վերջապես՝ Լեռովյանը մեկ անգամ չէ, որ հմայվել է ոուսական երգերով, որոնցից «Не шей ты мне, матушка...»-ի բառերի ու մեղեդու ազդեցությամբ գրել է հայերեն բանաստեղծություն («Կարե՞մ սրտիս կսկիծը լեզվով քեզ պատմել...», իսկ «Прощаюсь, ангел мой...» սկսվածքով երգն էլ նախապես ունկնդրելով Վասիլևյան կողմից 15-րդ գծի վրա ապրող օրիորդ Տատյանա Ծակիմովայի կատարմամբ՝ հետո արտապրել է իր պետերբուրգյան գրություններից մեկի ազատ մասերում:

Ուշադիր քննություն կատարելիս գուցե էլի ինչ-ինչ մանրուքներ երևան գան, բայց հազիվ թե դրանք նոր եզրակացությունների հիմք ծառայեն: Պուշկինի, Լերմոնտովի ու Բելինսկու երկերի առնչությամբ չափից ավելի բծախնդիր ենք եղել ու ցավով պիտի արձանագրենք, որ առայժմ ոչ մի շյուղ չենք գտել:

Լեյսպիտով, Լեռովյանի ինքնամոռաց նվիրումը հայ ժողովրդի ոուսական կողմնորոշման գաղափարին, նրա հետևողական գործունեությունը հայ միջավայրում տարածելու ոուսաց լեզուն և ոուսական մշակույթը թելադրված էին մեր ժողովրդի պատմական զարգացման որոշակի շրջափուլի՝ XIX դ. առաջին կեսի ազատագրական ու լուսավորական շարժման շահերով: Նրա համապատասխան երկերն ու ասույթները, նրա կրակոտ պատգամները այլ ևնթախմաստ չունենին, բացի ոուսական հզոր պետության հովանավորությունը վայելելու, այդ հովանավորության տակ ազդուրեն համախմբվելու, տրեստեսական ու կուլտուրական բարվոք վիճակի հասնելու մտահոգությունը: Լեյսպիտով Ռուսաստանի, նաև ուսումնական ժողովրդի սգնությամբ ազատագրված ու միավորված Հայաստանի պետական կարգի հարցը Լեռովյանը քննության նյութ չի դարձրել, և ոմանց այսօրվա մտահոգությունը, թե հայ մեծ լուսավորչին պետական կառավարման ի՞նչ ձևի կողմնակից հռչակել, որ դա ներդաշնակներ հեղափոխական դեմոկրատիզմի աշխարհայեցողությանը, լուրջ ու գիտական չէ, անհոգ է ու հակապատմական:

Միապետական Ռուսաստանի տիրապետության տակ անցնելով հայուհյունը միանգամից շրջեց իր բոլոր դարավոր վերքերը: Միացումից հետո լուսավոր շատ կողմերի հետ երևան եկան նաև ստվերոտ կետեր, որոնք միապետական վարչակարգի և պաշտոնեության գործունեության հետևանքն էին: Լեռովյանն այդ առթիվ բազմիցս իր քննադատական խոսքն է ասել, դրանք վերացնելու ուղիների վերաբերյալ իր նկատառումները հայտնել: Սակայն վերջիններս հեռուն գնացող հետևություններ անելու հիմքեր չեն տալիս: Դարն ու ժամանակը սահմանափակում էին նաև Լեռովյանի մտահորիզոնը:

Լեռովյանը կրողն է լուսավորական-դեմոկրատական աշխարհայացքի ու ուժանտիկ պատմահայեցողության նաև հայ-ուսական գրական-մշակութային առնչությունների ոլորտներում: Նա անկեղծորեն փառաբանել է հայ ժողովրդի ոուսական կողմնորոշման գաղափարը և իր գործունեությամբ խոր հետք թողել հայ հասարակական մտքի պատմության մեջ:

АБОВЯН И РОССИЯ

ԽՈՍՈՒ ԱԿՈՅԱՆ

Резюме

В своих произведениях и публичных выступлениях основоположник новой армянской литературы Х. Абовян последовательно отстаивал идею русской ориентации армянского народа. Культурное и политическое возрождение своей Родины он не представлял без покровительства могучей России, считая, что только Россия может предоставить народам Азии желанную свободу и избавить их от ужасов и гнета турецкого и иранского деспотизма.

Х. Абовян проявлял живой интерес к творчеству русских писателей-просветителей и романтиков—М. Ломоносова, М. Карамзина, И. Крылова и В. Жуковского. Сочинения первых он перевел на армянский язык, с последним был лично знаком.

Будучи смотрителем и учителем уездных училищ Тифлиса и Эривани Абовян лично обучал отечественное юношество русскому языку, составив для этой цели «Новую теоретическую и практическую грамматику русского языка для армян» (1839 г.).

Изучение и анализ фактов, касающихся отношения Абовяна к России и русской культуре, позволяет констатировать, что пока не выявлено ни одного даже косвенного упоминания о личных или «тайных» связях армянского просветителя с Пушкиным и Лермонтовым, с русскими революционными демократами и Белинским, хотя и в последние годы на это без всякого основания пытаются ссылаться некоторые исследователи.